ՈՒԺի մեջ է 2026թ. մարտի 3-ից

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Գլխավոր գործադիր տնօրեն

Հ. Անդրեասյան _____

26 փետրվարի 2026թ.

1. Սույնով սահմանվում են «ԱԿԲԱ ԲԱՆԿ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Բանկ) կողմից հաճախորդների հաշիվների բացման, սպասարկման, փակման, փոխանցումների իրականացման, գումարի կանխիկ տրամադրման, acba digital ինտերնետ բանկինգ համակարգով ծառայությունների մատուցման, չեկային գրքույկների տրամադրման, անհատական պահատեղերում արժեքների պահատվության ծառայության, ինչպես նաև արժեթղթերի առքուվաճառքի և պահառության գործառնությունների և հաճախորդների ֆինանսական գործունեության հետ կապված այլ ծառայությունների դիմաց գանձվող սակագները և միջնորդավճարները (այսուհետ՝ Սակագներ):

2. Սակագների ձևավորման հիմքում ընկած են միջազգային բանկային պրակտիկայում ծառայությունների մատուցման գոյություն ունեցող հիմնադրույթները:

3. Սակագները կարող են Բանկի կողմից միակողմանիորեն փոփոխվել՝ այդ մասին նախապես Բանկի ինտերնետային կայքում և/կամ այլ հրապարակային աղբյուրներում, Բանկի տարածքում հաճախորդների համար տեսանելի վայրում տեղադրելով, ինչպես նաև համապատասխան պայմանագրերով նախատեսված կարգով հաճախորդներին տեղեկացնելով:

4. Հաճախորդի կողմից բանկային հաշվի պայմանագրի կամ որոշակի ծառայության համար սահմանված տիպային փաստաթղթի ստորագրումը հաստատում է Սակագների, ինչպես նաև Բանկի կողմից տվյալ ծառայության համար սահմանված առանձին պայմանների և կանոնների ընդունումը:

5. Սակագներով ուղղակի չնախատեսված, սակայն Բանկի կողմից մատուցվող ծառայությունների, գործառնությունների ու գործարքների պայմանները սահմանվում են Բանկի և հաճախորդի միջև կնքված պայմանագրով և/կամ Բանկի ներքին իրավական ակտերով:

6. Առանձին դեպքերում, հաշվի առնելով հաճախորդի՝ Բանկում ունեցած դրամական հոսքերի չափը, հաշիվների մնացորդները, վարկային և/կամ ավանդային պատմությունը, գործարար համբավը, Բանկի հետ համագործակցության ժամանակահատվածը, կարող են առաջարկվել Սակագներից արտոնյալ պայմաններով (ոչ ստանդարտ) Սակագներ:

7. Մատուցված ծառայությունների համար Սակագներում նշված միջնորդավճարները Բանկի կողմից միակողմանիորեն (անակցեպտ) կարող են գանձվել հաճախորդի բանկային հաշվից, եթե այլ բան սահմանված չէ հաճախորդի հետ կնքված պայմանագրով:

8. Սույնով հայտնում ենք, որ Բանկի հանդեպ ընթացիկ և խնայողական հաշվի հետ կապված բոլոր պարտավորությունները Բանկի կողմից լրիվ կամ մասնակի կհաշվանցվեն Հաճախորդների Բանկում ունեցած բոլոր բանկային հաշիվներից:

9. Բանկը հաճախորդներին ծառայություններ է մատուցում աշխատանքային օրերին[1] Երևանի ժամանակով ժամը 9:30-17:30 («Հոմպլեքս Մոլ» մասնաճյուղում՝ բոլոր օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:00-00:00), բացառությամբ հետևյալ դեպքերի.

- մասնաճյուղերի կողմից ծառայությունների դիմաց վճարումների ընդունում և հաշվարկադրամարկղային սպասարկում՝ աշխատանքային օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-16:30-ը («Հոմպլեքս Մոլ» մասնաճյուղում՝բոլոր օրերին՝ Երևանի ժամանակով ժամը 9:30-21:30):
- հեռահար՝ acba digital համակարգով և ֆինանսական գործառնությունների իրականացման ավտոմատ սարքերի (այսուհետ՝ ՖԳԻԱՍ) միջոցով ծառայությունների մատուցում՝ ցանկացած օր՝ առանց ժամային սահմանափակման, եթե տվյալ գործարքի կատարման համար Բանկի ներքին ընթացակարգերով այլ սահմանափակում նախատեսված չէ:

- ինչպես նաև, եթե Բանկի կողմից այլ բան սահմանված չէ առանձին ծառայությունները կարգավորող պայմաններում, պայմանագրերում, Բանկի ներքին իրավական ակտերում կամ www.acba.am Բանկի պաշտոնական կայքում:

[1] Աշխատանքային օրեր՝ երկուշաբթիից ուրբաթ օրերը (բացառությամբ այն օրերի, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն ոչ աշխատանքային օրեր), ինչպես նաև այն օրերը, որոնք ՀՀ օրենսդրությամբ համարվում են/կհամարվեն աշխատանքային օրեր:

Բանկում գործառնությունների ձևակերպման համար գործառնական օր են համարվում երկուշաբթիից կիրակի օրերը՝ ժամը 9:00-ից 22:00-ը:

10. Կատարվող գործառնությունների նպատակն ու իրական շահառուներին պարզելու նպատակով Բանկն իրավունք ունի պահանջել լրացուցիչ փաստաթղթեր, պարզաբանումներ և նյութեր և կարող է կասեցնել գործառնությունները կամ հրաժարվել դրանք կատարելուց, եթե Բանկի կարծիքով գործարքների հիմնավորող բավարար ապացույցներ չեն ներկայացվում: Բանկը կարող է սահմանափակումներ կիրառել նաև առանձին ծառայությունների գծով, օրինակ՝ փոխանցումների կատարման և/կամ փոխանցումների ստացման արգելք, այդ թվում՝ Բանկի կողմից տարանցիկ դասակարգված գործարքներ:

11. Բանկը պատասխանատու չէ անհաղթահարելի ուժի (բնական աղետներ, պետական մարմինների ակտեր, գործադուլ, քաղաքացիական հուզումներ, շրջափակումներ, հեռահաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցում, արտակարգ այլ հանգամանքներ) հետևանքով առաջացած ուշացումների, սխալների և վնասների համար:

12. Բանկի ներքին իրավական ակտերով և/կամ կոնտրագենտների և/կամ Բանկի հաճախորդների հետ կնքված պայմանագրերով որոշակի շրջանակի կամ առանձին ֆիզիկական և/կամ իրավաբանական անձանց և/կամ անհատ ձեռնարկատերերի համար կարող են սահմանվել Սակագներից տարբերվող այլ սակագներ:

ՓՈԽԱՆՑՈՒՄՆԵՐ

Բանկը վճարման հանձնարարականները ընդունում և կատարում է համաձայն հետևյալ ժամանակացույցի, բացառությամբ սույն սակագնի 15.1 կետի փոխանցումների համար.

	Վճարման հանձնարարականների ընդունում և կատարում			
	Ընդունում	Կատարում	Ընդունում	Կատարում
ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով և Եվրոյով ՀՀ տարածքում Bank_mail համակարգի միջոցով *15:00-ից մինչև 15:30-ն ընդունված 500 մլն ՀՀ դրամ, 1 մլն ԱՄՆ դոլար/եվրո արտարժույթը գերազանցող փոխանցումները կարող են կատարվել հաջորդ աշխատանքային օրը*	Մինչև ժամը 15:30	Նույն աշխատանքային օրը	Ժամը 15:30-ից հետո	Հաջորդ աշխատանքային օրը
Արտարժույթ SWIFT համակարգով	Մինչև ժամը 16:30	Նույն աշխատանքային օրը	Ժամը 16:30-ից հետո	Հաջորդ աշխատանքային օրը

15. Փոխանցումներ Բանկում հաշիվ ունենալու դեպքում	
15.1. Փոխանցումներ Բանկի ներսում՝ անկախ արժույթից,[2] ներառյալ պարբերական վճարման հանձնարարականի հիման վրա	անվճար
- Ֆիզիկական անձանց համար	անվճար
- Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար[3] *Բյուջետային հիմնարկների համար նշված ծառայությունը մատուցվում է անվճար*	500 ՀՀ դրամ
- վավերապայմանների փոփոխում (ուղղում), չեղյալ համարում ըստ հաճախորդի գրավոր հայտի	անվճար
15.2. Փոխանցումներ ՀՀ տարածքում Bank_Mail համակարգի միջոցով[4]	
- ՀՀ դրամով՝ ներառյալ պարբերական վճարման հանձնարարականի հիման վրա	200 ՀՀ դրամ
Ֆիզիկական անձանց համար *Սոցիալական փաթեթի հաշիվներից փոխանցման իրականացման դեպքում նշված ծառայությունը մատուցվում է անվճար*	200 ՀՀ դրամ

[2] ԱՄՆ դոլար արժույթով ArCa Transfer քարտին Bank_Mail և SWIFT համակարգերով ԱՄՆ դոլարով ստացված գումարներից, ինչպես նաև 50 ԱՄՆ դոլարից ավելի ԱՄՆ դոլարով անկանխիկ եղանակով ստացված բոլոր այլ գումարներից (բացառությամբ արագ համակարգերով ստացված գումարների) գանձվում է 0.5%, նվազագույնը՝ 1 000 ՀՀ դրամ:
ՀՀ դրամ արժույթով ArCa Transfer քարտին 500 000 ՀՀ դրամից ավելի անկանխիկ մուտք եղած գումարներից (բացառությամբ արագ համակարգերով և կանխիկ կամ անկանխիկ փոխարկման արդյունքում մուտք եղած գումարների) գանձվում է միջնորդավճար 0.3%, նվազագույնը՝ 200 ՀՀ դրամ:

[3] Սույն սակագինը չի տարածվում «ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ» ՎԱՐԿԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓԲԸ-ի հաշիվներին, Հատուկ հաշիվներին և Հատուկ հաշիվներից կատարված փոխանցումների վրա:

[4] Սույն սակագինը սահմանվում է անվճար՝ «Հայաստան» համահայկական և «Զինծառայողների ապահովագրության» հիմնադրամների հաշվեհամարներին փոխանցումների իրականացման, ինչպես նաև արժեթղթերի ձեռք բերման համար ՀՀ Ֆոնդային բորսայում նախնական դեպոնացման նպատակով փոխանցումների իրականացման դեպքում:

Իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի համար *Բյուջետային հիմնարկների համար նշված ծառայությունը մատուցվում է անվճար*	500 ՀՀ դրամ
- ՀՀ դրամով շտապ փոխանցումներ *«Շտապ» պայմանով փոխանցումները կատարվում են նույն աշխատանքային օրվա ընթացքում վճարման հանձնարարականը թղթային եղանակով ժամը 15:30-ից մինչև 15:45-ը ներկայացնելու դեպքում:* *500 մլն ՀՀ դրամ, 1 մլն ԱՄՆ դոլար/եվրո արտարժույթը գերազանցող փոխանցումները կարող են կատարվել հաջորդ աշխատանքային օրը*	10 000 ՀՀ դրամ
- ԱՄՆ դոլարով և եվրոյով՝ ներառյալ պարբերական վճարման հանձնարարականի հիման վրա	5 000 ՀՀ դրամ
15.3. Փոխանցումներ SWIFT համակարգի միջոցով[5]	
- ԱՄՆ դոլարով	
եղանակը՝ BEN (թղթակից բանկի միջնորդավճարը գանձվում է փոխանցվող գումարից) դեպի Ռուսաստանի Դաշնություն և Բելառուսի Հանրապետություն	0.1%, նվազագույնը՝ 3 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 40 000 ՀՀ դրամ 0.1%, նվազագույնը՝ 50 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 100 000 ՀՀ դրամ
եղանակը՝ OUR *Փոխանցվող գումարից գանձումներից խուսափելու ցանկություն ունեցող հաճախորդներից, ի լրումն նշված միջնորդավճարի, գանձվում է լրացուցիչ վճար՝ 10 000 ՀՀ դրամ, յուրաքանչյուր փոխանցման համար (OUROUR եղանակ): ԱՄՆ-ի բանկերի շահառուների օգտին OUROUR եղանակով փոխանցումներ իրականացնելիս պարտադիր ներկայացման ենթակա է սպացող բանկի ACH (Automated Clearing House) կոդը:* «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ի թղթակից բանկի միջնորդավճարը վճարում է «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն, իսկ փոխանցումը կատարելու նպատակով ներգրավված այլ միջնորդ բանկ(եր)ի հետ կապված հնարավոր ծախսերը գանձվում է փոխանցվող գումարից դեպի Ռուսաստանի Դաշնություն Դեպի Բելառուսի Հանրապետություն	0.2%, նվազագույնը 15 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 75 000 ՀՀ դրամ 0.15%, նվազագույնը՝ 125 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 175 000 ՀՀ դրամ 0.15%, նվազագույնը՝ 50 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 100 000 ՀՀ դրամ
- եվրոյով՝	
եղանակը՝ BEN (թղթակից բանկի միջնորդավճարը գանձվում է փոխանցվող գումարից) Դեպի Ռուսաստանի Դաշնություն և Բելառուսի Հանրապետություն	0.1%, նվազագույնը 6 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 60 000 ՀՀ դրամ 0.1%, նվազագույնը՝ 50 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 100 000 ՀՀ դրամ
եղանակը՝ OUR (թղթակից բանկերի միջնորդավճարը «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ հաշվին)	
- մինչև 12 500 եվրո (ներառյալ) - 12 500 եվրոյից ավելի - դեպի Թուրքիա, Ռումինիա և Բուլղարիա	0.2% , նվազագույնը՝ 9 000 ՀՀ դրամ 0.2%, նվազագույնը՝ 13 000, առավելագույնը՝ 75 000 ՀՀ դրամ 0.2%, նվազագույնը՝ 15 000 առավելագույնը՝ 75 000

[5] SWIFT համակարգի OUR եղանակով 500մլն և ավելի ՀՀ դրամին համարժեք արտարժույթի փոխանցումների դեպքում փոխանցման միջնորդավճարը կազմում է 200 000 ՀՀ դրամ:

- դեպի Ռուսաստանի Դաշնություն - դեպի Բելառուսի Հանրապետություն	ՀՀ դրամ 0.15%, նվազագույնը՝ 125 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 175 000 ՀՀ դրամ 0.15%, նվազագույնը՝ 50 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 100 000 ՀՀ դրամ
- ՌԴ ռուբլով, վրացական լարիով (կատարվում է միայն OUR գանձման տարբերակով)	0.1%, նվազագույնը 5 000 ՀՀ դրամ առավելագույնը՝ 30 000 ՀՀ դրամ
- «Շտապ» փոխանցումներ ԱՄՆ դոլար/եվրո արժույթով փոխանցումների դեպքում ՌԴ ռուբլու դեպքում *«Շտապ» պայմանով փոխանցումները կատարվում են նույն աշխատանքային օրվա ընթացքում վճարման հանձնարարականը թղթային եղանակով 16:30-ից մինչև 17:00-ը ներկայացնելու դեպքում: «Շտապ» փոխանցման պայմանը գործում է մինչև 500 000 ԱՄՆ դոլար/եվրո և 10 մլն ՌԴ ռուբլով գումարների փոխանցումների դեպքում: Միջնորդավճարը գանձվում է ի հավելումն Բանկում գործող փոխանցումների սակագների:*	7 000 ՀՀ դրամ 3 000 ՀՀ դրամ
- այլ արտարժույթով՝	
եղանակը՝ BEN (թղթակից բանկի միջնորդավճարը գանձվում է փոխանցվող գումարից)	0.1%, նվազագույնը 6 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 60 000 ՀՀ դրամ
եղանակը՝ OUR (թղթակից բանկերի միջնորդավճարը «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ հաշվին)	0.15%, նվազագույնը՝ 15 000 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 75 000 ՀՀ դրամ
Գումարի փոխանցման համար հաճախորդի կողմից հայտի նախօրոք ներկայացման նվազագույն ժամկետը՝	
- 100 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթից 300 մլն ՀՀ դրամ կամ համարժեք արտարժույթ	1 օր
- 300 մլն ՀՀ դրամից կամ համարժեք արտարժույթից ավելի	2 օր
16. Փոխանցումներ առանց հաշվի բացման	
16.1. Փոխանցումներ Բանկի ներսում՝ անկախ արժույթից	անվճար
- վավերապայմանների փոփոխում (ուղղում), չեղյալ համարում ըստ հաճախորդի գրավոր հայտի	1 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
16.2. Փոխանցումներ ՀՀ տարածքում Bank_Mail համակարգի միջոցով	
- ՀՀ դրամով (թույլատրվում է փոխանցել միայն մինչև 5 000 000 (ներառյալ) ՀՀ դրամ՝ բացառությամբ պետական բյուջե կատարվող վճարումների փոխանցման համար (տեղական և համայնքային), որի դեպքում սահմանափակում չի կիրառվում)	
մինչև 1 000 000 ՀՀ դրամ (ներառյալ)	500 ՀՀ դրամ
1 000 000 ՀՀ դրամից ավելի՝	1 000 ՀՀ դրամ
- ՀՀ դրամով՝ շտապ փոխանցումներ *«Շտապ» պայմանով փոխանցումները կատարվում են նույն աշխատանքային օրվա ընթացքում վճարման հանձնարարականը թղթային եղանակով ժամը 15:30-ից մինչև 15:45-ը ներկայացնելու դեպքում:*	10 000 ՀՀ դրամ
- արտարժույթով Թույլատրվում է փոխանցել միայն մինչև 3 000 (ներառյալ) ԱՄՆ դոլարին համարժեք գումար	5 000 ՀՀ դրամ
17. Փոխանցումներ արագ դրամական համակարգերի միջոցով՝ անկախ հաշվի առկայությունից[6]	
17. 1. «MoneyGram» համակարգով ԱՄՆ դոլարով	«MoneyGram» դրամական փոխանցումների համակարգի կողմից հաստատված սակագներով [17]
17.2. «RIA Money Transfer» համակարգով ԱՄՆ դոլարով, եվրոյով	«RIA Money Transfer» դրամական

[6] Փոխանցումներն իրականացվում են միայն ֆիզիկական անձանց միջև:

	փոխանցումների համակարգի կողմից հաստատված սակագներով [17]
17.3. «UBPAY» համակարգով ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով, ՌԴ ռուբլով	«UBPAY» դրամական փոխանցումների համակարգի կողմից հաստատված սակագներով [17]
18. Դրամական փոխանցումների ստացում հեռախոսազանգի ծառայության, ինչպես նաև acba digital ինտերնետ բանկինգ համակարգի միջոցով	անվճար
19. Կատարված* միջբանկային փոխանցման պայմանների փոփոխում, չեղյալ համարում, հարցումների իրականացում ըստ հաճախորդի գրավոր հայտի *ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ-ի թղթակցային հաշիվներից ելքագրված փոխանցումներ: Եթե փոխանցումը ԱԿԲԱ ԲԱՆԿ ԲԲԸ-ից դուրս չի եկել, ապա պայմանների փոփոխման/չեղյալացման սակագինը չի գանձվում:	
- ՀՀ դրամով, ԱՄՆ դոլարով, եվրոյով՝ ՀՀ տարածքում Bank_Mail համակարգի միջոցով	2 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- ՌԴ ռուբլով, վրացական լարիով SWIFT համակարգով	10 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- այլ արտարժույթով SWIFT համակարգով	25 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- Սակագների 17-րդ կետում նշված փոխանցումների համար	անվճար
20. Փոխանցման վավերապայմանների վերաբերյալ թղթակից բանկին տրված պարզաբանումներ	Թղթակից բանկի կողմից գանձված միջնորդավճարին համարժեք ՀՀ դրամ
21. SWIFT հաղորդագրության պատճենի տրամադրում	
- ֆիզիկական անձանց համար	1 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
- իրավաբանական անձանց և ԱՁ-ների համար	2 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ) acba digital համակարգով դիմելու դեպքում՝ 1 000 ՀՀ դրամ (ներառյալ՝ ԱԱՀ)
23. Թղթակից բանկերից ստացված արտարժույթով չպարզված գումարների ետ վերադարձ - ՌԴ ռուբլի - այլ արտարժույթ	- անվճար - 2%, առավելագույնը՝ 15 000 ՀՀ դրամ
24. Կոմունալ վճարումներ, ներառյալ պարբերական վճարման հանձնարարականի հիման վրա	Անվճար